

վանքերէն մին Ս. Հրեշտակապետն է, իսկ միւսն Ս. Ստեփանոս: Վերջնոյս վերաշինութեան իբր թուական կարելի է գնել է-Ը դար, վասն զի ճիշդ այս միջոցին էր որ Ս. Երկրին պարսկական գրաւումէն յետոյ, Երուսաղէմի պատրիարքութեան եւ Հայոց կաթողիկոսութեան յարաբերութիւնները բարւոքուած էին. այս պարագան կը հաստատեն Պարսկաստան գերի տարուած Զաքարիա պատրիարքին՝ Պարսից ժողովին մէջ ի նպաստ Հայ Եկեղեցւոյ ըրած յայտարարութիւնները, եւ անոր յաջորդին՝ Մոտեսառոսի՝ առ Կոմիտաս կաթողիկոսն ուղղած թուղթը եւ վերջինին պատասխանը (տե՛ս Սեքէոս, էջ 131-139): Մոտեսառոս իր նամակին մէջ կը յիշէ ա՛յն առատաձեռն օժանդակութիւնը, զոր Հայ ուխտաւորներ չէին խնայեր Երուսաղէմի Ս. Տեղեաց վերաշինութեան համար, եւ դարձեալ կը խնդրէ կաթողիկոսէն. «Մի՛ պակասիլ ամենեւին ի յիշել եւ նայիլ ի մեզ եւ յաղքատս Երուսաղէմի, եւ որ ինչ պիտոյ է ընուլ»: Այս բարւոք յարաբերութեանց մէջ, Պարսիկ տէրութեան սահմանին մէջ գտնուող նախարարութիւնները եւ մասնաւորապէս նոյն պետութեան համակիր Ամատունիք պատեհութիւններ կրնային ստեղծել բարեպաշտական յիշատակներով յաւերժանալու համար Ս. Երկրին մէջ. այս տուիքներուն վրայ, կրնանք հաստատել թէ Սիոնի վրայ Հայոց Ս. Հրեշտակապետ եւ Ս. Ստեփանոս վանքերը շինած են Ամատունիք, է-Ը դար. վասն զի արդէն Ը. դարու վերջերը, Ամատունեաց աստղը մարելու վրայ էր, եւ անոնք աւրաբական արչաւանքներու հետեանքով, Շապուհ Ամատունիի եւ անոր որդւոյն Համամի առաջնորդութեամբ, 12,000 մարդերով, ստիպուեցան հեռանալ իրենց բնագաւառ Արտաղէն եւ ապաստանիլ Յունաստան, Ճորոխի անդիի կողմը, ինչպէս կը հաղորդէ մեզ Ղեւոնդ Պատմագիր (էջ 168). հետեաբար, Ամատունիներուն Ս. Տեղեաց եկեղեցաչէն զործը կրնայ կատարուած ըլլալ միայն մինչեւ Ը. դարու սկիզբը: Ս. Աթոռոյ մատենադարանին (թ. 1130) ձեռագրին մէջ գտնուած Մարկոս գրչին ուխտատեղեաց ցուցակի մը ընդօրինակութեան մէջ եւս կը յիշատակուի Ս. Ստեփանոսի վանքը, « յարեւելս հարաւոյ Երուսաղէմի » խօսքերով: Բայց նոյն վանքին հայկական սեպհականութեան կարկառուն եւ անհերքելի ապացոյցը կու տայ ա՛յն յիշատակարանը՝ որ կը գտնուի մեր մատենադարանին (թ. 1863) ձեռագիր ծա-